### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

| № | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԹԵՐԹ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|
| 1 | Ընդհանուր տվյալներ | Էî – 1 | |
| 2 | Էլեկտրամատակարարման սկզբունքային սխեմա | Էî – 2 | |
| 3 | Էլեկտրամատակարարման սկզբունքային սխեմա. /Օդափոխություն և ջրամատակարարում/ | Էî – 3 | |
| 4 | Էլեկտրամատակարարման սկզբունքային սխեմա. /Խոհանոցային սարքեր/ | ԷՏ - 4 | |
| 5 | Էլեկտրամատակարարման սկզբունքային սխեմա. /Փայտամշակման արհեստանոց/ | ԷՏ - 5 | |
| 6 | Էլ. սարքավորումների տեղակայման հատակագիծ վահանակային սենյակում | ԷՏ - 6 | |
| 7 | Էլ.ուժային սարքավորումներ /Օդափոխություն և ջրամատակարարում/ Առաջին հարկի հատակագիծ | ԷՏ - 7 | |
| 8 | Էլ.ուժային սարքավորումներ /Օդափոխություն և ջրամատակարարում/ Երկրորդ հարկի հատակագիծ | ԷՏ - 8 | |
| 9 | Էլ.ուժային սարքավորումներ /Խոհանոցային սարքեր և փայտամշակման արհեստանոց/ . Առաջին հարկի հատակագիծ | ԷՏ - 9 | |
| 10 | Մալուխային մատյան | ԷՏ - 10 | |
| 11 | Էլեկտրալուսավորություն. Առաջին հարկի հատակագիծ | ԷՏ - 11 | |
| 12 | Էլեկտրալուսավորություն. Երկրորդ հարկի հատակագիծ | ԷՏ - 12 | |
| 13 | Էլեկտրալուսավորություն. Երրորդ հարկի հատակագիծ | ԷՏ - 13 | |
| 14 | Սարքավորումների մասնագիր | ԷՏ - 14 | |
| 15 | Սարքավորումների մասնագիր | ԷՏ - 15 | |

### Հզորությունների հաշվարկման աղյուսակ

| № | ԱՆՎԱՆՈՒՄԸ | Չափի միավոր | Դրվածք. հզորութ. | Լ Ր | Պահանջ. հզորություն | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Խոհանոցային սարքավորումներ | կՎՏ | 29.5 | 0.55 | 16.23 | |
| 2 | Օդափոխություն | կՎՏ | 18.52 | 0.7 | 12.97 | |
| 3 | Փայտամշակման արհեստանոց | կՎՏ | 14.72 | 0.5 | 7.45 | |
| 4 | Էլ.լուսավորություն | կՎՏ | 81.14 | 0.75 | 60.8 | |
| 5 | Վերելակ | կՎՏ | 5 | 1 | 5 | |
| 6 | Արտաքին Էլ.լուսավորություն | կՎՏ | 1.2 | 1 | 1.2 | |
| 7 | Պաշտպանական և հակահրդեհային ազդանշանում | կՎՏ | 1 | 1 | 1 | |
| 8 | Կաթսայատուն | կՎՏ | 3.8 | 0.7 | 2.7 | |
| | **Ընդամենը օբյեկտով /ձմեռային ռեժիմ/** | **կՎՏ** | 154.8 | 0.7 | 107.4 | |

## I.Ընդհանուր տվյալներ

Նախագծում դիտարկվել են Կապանի h.7 դպրոցի էլ.սնման, էլ ուժային սարքավորումների և լուսավորության հարցերը : Աշխատանքային գծագրերի կատարման համար հիմք են հանդիսացել ճարտարապետաշինարարական գծագրերը, տեխնոլոգիական, ջրամատակարարման և կոյուղու, օդափոխության առաջադրանքները:

Նախագծման համար օգտագործվել են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը

. ՀՇՇԿ 2.08.02-89 - ,Հասարակական շենքեր և կառույցներե

. Կ Ն-2002 - , Էլ. սարքվածքների տեղակայման կանոններե

. ըՀԾ 59-88 - Բնակելի և հասարակական շենքերի էլ. սարքավորումներ.

. ՀՇՇԿ3.05.06-85 - «Էլեկտրատեխնիկական սարքավորումներ»

## II.Էլեկտրատեխնիկական մաս

Նախագծում իրականացվել են հետևյալ մոնտաժային աշխատանները:

- Մուտքա-բաշխիչ սարքավորման տեղադրում
- Էլ.ուժային և լուսավորության սարքավորումների տեղադրում
- Մայրագծային և խմբային գծերի անցկացում
- Հողանցման կոնտուրի տեղադրում

Համաձայն Կ Ն-ի նախագծվող շինության սպառիչները պատկանում են էլեկտրամատակարարման 1-ին, 2-րդ և 3-րդ կարգին: Վերելակը, էվակուացիոն և վթարային լուսավորությունը, ինչպես նաև հակահրդեհային ազդանշանման միջոցները պատկանում են 1-ին կարգին իսկ մնացած էլեկտրասպառիչները ` 2-րդ և 3-րդ կարգին: Կառույցի էլ. մատակարարումը իրականացվում է Տ/Ե-ից 2 մալուխային գծերով: Էլ. էներգիայի բաշխման սիստեմը եռաֆազ է 380/220Վ լարման:

Էլ. էներգիայի բաշխման նպատակով առաջին հարկում աստիճանավանդակի տակ գտնվող վահանակային սենյակում տեղադրվում են մուտքա-բաշխիչ սարքավորում/ՄԲՍ/ և բաշխիչ վահաններ /ԳԲՎ, ՈՒԺՎ/:
Էլ. էներգիայի բաշխումը խոհանոցային սարքավորումներին, օդափոխիչներին և փայտամշակման արհեստանոցի սպառիչներին իրականացվում է տեղադրված համապատասխան բաշխիչ վահանների օգնությամբ: Մայրագծային մալուխները վահանակային սենյակում անց են կացվում վաքերով: Էլեկտրաէներգիայի բաշխումը սպառիչներին իրականացվում է հատակում տեղադրվող խողովակներով, առաստաղի տակով, ուղղաձիգ հատվածներում պատերով , ինչպես նաև կախովի առաստաղի ետնամասով, պղնձե մալուխներով և հաղորդալարերով:

Կառույցի էլ. լուսավորության նպատակով նախատեսված են վահաններ համապատասխան քանակի միաբևեռ ավտոմատ անջատիչներով և պաշտպանիչ անջատման սարքերով: Վահանակները տեղադրվում են հատակից 1.5մ բարձրության վրա, ընդհանուր նշանակության վարդակները և անջատիչները 0.8մ բարձրությամբ, խոհանոցում համապատասխան` տեխնոլոգիական պահանջների:

Էլեկտրահաղորդագծերի մոնտաժը իրագործել սանտեխնիկական ցանցի մոնտաժից հետո, մինչև ծածկի կարերի լցափակումը և միջնորմների հետ միաժամանակ: Հարկերի հիմնական անցուղիներում նախատեսված է վթարային լուսավորություն և ելքի ցուցանակներ: Էլ. էներգիայի ընդհատվելու դեպքում վերջիներս ավտոմատ կերպով միանում են տեղային անկախ աղբյուրին /3 ժամյա աշխատանքի ակումուլյատորային մարտկոցներ/: Կառույցում նախատեսված են հողանցման հպակով վարդակներ, իսկ խոնավ սենյակներում պաշտպանիչ անջատման սարքեր/ ԻԾ /: Աստիճանավանդակների լուսավորության ղեկավարումը իրականացվում է առաջին հարկից :

Նախագիծը իրականացված է համապատասխան գործող նորմերի և կանոնների:

### ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մուտքա-բաշխիչ սարքավորում /ՄԲՍ/
- Գլխավոր բաշխիչ վահան /ԳԲՎ/
- Ուժային վահան ՈւժՎ
- Լուսավորության վահան /ԼՎ/
- Մագնիսական գործարկիչ /Կխ/
- Ավտոմատ անջատիչ /АП /
- Լյումինեսցենտային լուսատու 2x36վՏ հզորության
- Լյումինեսցենտային լուսատու 4x18վՏ հզորության
- Վթարային լուսավորության լուսատու
- Լուսատու պատի պաշտպանիչ ցանցով հալոգեն լամպով
- Լուսատու առաստաղային շիկացման լամպերով
- Լուսատու պատի շիկացման լամպերով
- ԼՑ -Լույսային ցուցանակ , «Ելք»
- Վարդակ` երկբևեռ հողանցիչով
- Վարդակ` երկբևեռ հողանցիչով, երկտեղանի
- Անջատիչ մեկսեղմականի
- Անջատիչ երկսեղմականի
- Անջատիչ հերմետիկ

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | . | | ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 7 ԴՊՐՈՑ | |
| | . | | | |
| | Մ. ՍՈՖՅԱՆ | | ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ | ՓՈւԼ: ԱՆ; ԹԵՐԹ: ԷՏ -1; ԹԵՐԹԵՐ: 15 |
| | Լ.ՎԻՐԱԲՅԱՆ | | | |
| | | | Ընդհանուր տվյալներ | «ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ |